

# ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆՈՍԻՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ-ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՌՅՀԴ-ՌՅՀԵ

Հ Ա Տ Ո Ր

ՁԲ

1925

Յ Ո Ւ Լ Ն Ս

Թ Ի Ի 7



Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆՈՍԻՐԱԿԱՆ

## Շ Ա Բ Ա Թ Ե Ի Կ Ի Ի Բ Ա Կ Է

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ռ Յ Ի Ա Ն Չ Ա Ր Ր Ռ Յ Մ Է Չ

976

Եկեղեցական հնախօսութեան կողմանէ կարևոր խնդիր մ'է անշուշտ հանգստեան հրէական ու քրիստոնէական օրերուն հակադրութիւնը կամ փոխանակութիւնը, որ ներկայ քրիստոնէից մէջ դաւանական տարբերութիւն մ'ալ ստեղծած է: Եւ կ'արժէ զիտնալ թէ ինչպէս կամ ինչ պատճառներէ յառաջ եկան մին և միւս օրերը, և կամ ինչպէս վարուեցաւ եկեղեցին անոնց նկատմամբ իւր ծագմանը մէջ:

Ա. ՇԱԲԱԹԸ: — Տասնարանեայ պատգամաց մէջ, զոր Եհովան որոտաց Սինայի կատարէն, գրուեցաւ և այս. «Յիշնալիք զօրն շաբաթոց սրբել զնա»: Եւ կը չափէ ու կը ճշդէ օրն ալ. «Վեց օր պիտի գործես ու պիտի կատարես բոլոր գործերդ, և եօրներորդ օրը շաբաթ է քու տէր Աստուծոյդ» (Ելք, Ի, 8-10): Այսպէս հանգրտեան օրուան պահպանութիւնը կու գար մասն կազմելու տասնաթիւ ծանրա-

ծանր պատուիրանաց, և ստիպողական կը դառնար ամենուն:

Մեր քննութեան նիւթ պիտի կազմեն հոս նախ՝ շաբաթի անունը, օրը, ծագումը, նպատակը, ստիպողականութիւնը, պահպանութեան եղանակը, և Յիսուսի վարժունքն անոր նկատմամբ. և յետոյ պիտի խօսինք կիրակէի վրայ:

1. Երբայեցերէն է շաբաթ, որ կը նշանակէ հանգիստ. որով պատուիրանը կը թարգմանուի պարզապէս, «Յիշէ հանգրտեան օրը՝ որ սուրբ պահես զայն». և թէ «եօթներորդ օրը հանգիստ է քու տէր Աստուծոյդ»:

2. Այս տեղ հանգիստը կայ, բայց օրը չէ ճշդուած. կ'ըսէ միայն՝ թէ «եօթներորդ» օր մ'է. այսինքն ամէն եօթն օրերէն վերջինը: Օրուան լուսութենէդ յայտնի է՝ որ պատուիրանին մէջ աւելի կարևոր է հանգիստը քան անոր օրը. և մեք զայս որո-

նելու համար՝ կը կարօտինք հրէական ասանդութեան, որոյ Յիսուսի ժամանակ և մինչև ցարդ պահած օրն էր անտարակոյս Մինայի պատգամատրութեան սրբածն ալ :

Յ. Սակայն լերան պատգամէն շատ կանուխ է Հրէից մէջ եօթնեկէի կազմութիւնը և եօթներորդին սրբութիւնը, Հրէական ժողովուրդն անպարտին մէջ երբ սկսաւ առաջին անգամ երկնապարգել մանան հաւաքել՝ իւրաքանչիւր օրուան բաւական չափով՝ ըստ հրամանին Մովսիսի, «վեցերորդ օրը կրկնապատիկ ժողովեցին կարեորք», կ'ըսէ ս. Գիրքը, մէկ բաժինը պահելու համար յաջորդ օրուան, որ իրենց հանգստեան սովորական օրն էր, և զայս կ'ընեն ինքնաբերաբար, զոր Մովսէս իմանալով՝ կը հաստատէ ու կը վաւերացնէ (Եւր, ԺԶ, 19-27) : Եւ այդ ժամանակ զեռ չէր ելած ի Մինա :

Բայց շարաթի գոյութիւնը հրէական ազգէն ալ յառաջ սկսած է, և կը տեսնուի Գաղղէացոց թով՝ շարաթոս կոչմամբ, որ էր աստուածոց նուիրեալ օր մը, և կը մեծարուէր աղօթիւք ու զոհերով. այս տարբերութեամբ՝ որ թաղական եօթնեակը լուսնական ամսոյն սկիզբէն կը հաշուէր, որով անոնց շարաթը չէր համեմատիր հրէականին հետ՝ : Յայտնի է ուրեմն՝ որ Հրեայք շարաթու գաղափարը սովորած էին Գաղղէացիներէն ու նուիրած Եւրոպայի, և Մովսէս զայն հաստատեց, փոխանակ նոր օր մը նշանակելու : Զուգադիպութիւն մ'էր որ կը կատարուէր պատուիրանին և սովորական դարձած օրուան միջեւ :

4. Տասնաբանեայ շարաթին նպատակն ալ կը ճշդէ. «Վասն զի տէր Աստուած վեց օրուան մէջ ըրաւ երկիրն ու երկիրը և ծովը և ինչ որ կայ անոնց մէջ, և եօթներորդ օրը հանգչեցաւ. անոր համար Տէրն օրհնեց ու սրբեց եօթներորդ օրը» (Եւր, Ի, 11) : Այս բացատրութիւնը պատգամաց մասն էր, թէ Մովսէս յաւելցուց,

յայտնի չէ : Բայց արարչութեան վեցօրեայ հաշիւն ըստ տառին չենք կարող առնուլ. վասն զի մովսիսական նկարագրին մէջ այդ օրերն յայտնապէս չըջաններ են, որոց մէջ Աստուած կը ստեղծէ ցամաքայնոց տեսակները, իսկ կրտսոց սերմերը, և ջրայնոց ու ջրասէր թռչնոց ժուրը, և հրաման կու տայ՝ որ նախաստեղծ լուսոյ ջերմութեամբ երկիրն ու ջրերը կամ մօրերը մեզ ծանօթ բնական շրջանով յառաջ բերեն իրենց յանձնուած էակները (Իրնդ. Ա.) : Երկիրը, կ'ըսէ, թող բոյսեր հանէ, և ջրերը՝ զեռուններ ու թռչուններ, կը հետևի՝ որ նախ ինք տուաւ անոնց արգաւանդութեան տարիները, և անոնց բնական ոճով ու ժամանակով արտադրեցին : Որով այս նկարագրին մէջ իրական օրեր չկան, այլ տեսակաց զոյացուցն օրերով բացատրուած է : Ոչ ալ Աստուծոյ «հանգչիլը» տառական իմաստ ունի. վասն զի Աստուծոյ գործը չդադրեցաւ բնաւ, այլ մանաւանդ երթալով աւելի ընդարձակեցաւ՝ տեսակաց պատկանող շրջանուն անհատները գոյացնելու և պահպանելու համար : Որով Յիսուս այդ հանգչիլն առարկողնեալուն կրնար ըսել իրաւամբ՝ թէ «իմ Հայրս մինչև ցարդ կը գործէ» (Յոհ. Ե, 17) :

Պարզ յարմարական կամ աւանդական բացատրութիւն մ'էր ուրեմն Մովսիսի կողմէն՝ արարչութեան եօթնօրեայ հաշիւը, զօրացնելու համար Հրէից աչքին՝ եօթներորդ օրուան պահպանութեան կարեւորութիւնը : Յիսուս ընդ հակառակն շարաթուն նպատակ կը դնէ մարդուն շահը, ըսելով. «Շարաթը մարդուն համար եղաւ» (Մրկ. Ի, 27) : այսինքն անոր բարբարական օգտին և նիւթական հանգստեան համար, որպէս զի կազդուէր հոգին աստուածապաշտութեամբ, և միանգամայն զօրացնէր իրեն յոգնած մարմինը՝ դադրելով աշխատութենէ :

Ծ. Գիտենք՝ որ տասնաբանեայ պատուիրանը դրական լինելէ յառաջ բնական օրէնք են, գրուած մարդոց արտերուն մէջ ըստ առաքելոյն (Հոովմ. Ի, 14-15), և ստիպողական ամենուն՝ ցարեղէն տախ.

1. Հմտ. Vigouroux, Diction. de la Bible, V, 1922.

տակաց վրայ արձանագրուելէն անկախաբար: Բնական օրէնք էր ուրեմն անոնց պահանջած հանգիստն ալ: Սակայն բնական օրէնքը, կամ մեր խելքը՝ որուն մէջ գրուած է այն, չի ճշդեր՝ թէ քանի՛ օրէն մին և որը նուիրելի է Աստուծոյ կամ մարմնոյ հանգստեան. որով տասնարանայն ալ ուր չի նշանակեր, այլ միայն «հանգստեան օր» մը: Հետևաբար ոչ բնական, այլ դրական օրինաց արդիւնք է մեզ ծանօթ օրը, մանաւանդ թէ քաղկեհրէական աւանդութեան, ինչպէս տեսանք. և իսկապէս չունի, չի կրնար ունենալ «հանգստեան» բնական պատուիրանին ոյժը. այնպէս որ մթէ փոխանակ շարաթուն՝ ուրիշ օր մը սահմանուած լինէր, հանգստեան օրէնքը հաւասարապէս զօրաւոր պիտի մնար:

6. Շարաթու պահպանութեան եղանակն էր այսպէս. « Զպիտի կատարես անոր մէջ ըու բոլոր գործերէ, դուն և ըու ուսորը, դուստրը, ծառան և աղայիւնը, եզն ու էջը և ամէն անասունը, օտարականն ու պանդուխտը՝ որ ըու մէջը են» (Եւր, Ի, 9-10): Արգիլուած էր այդ օրը կերակուր եփել, զոր պէտք էր նախորդ օրը պատրաստել (Եւր, ԺԳ, 23). մասնաւոր ժողովել զեանէն (անդ՝ 26-29), կրակ վառել տան մէջ (անդ՝ 1Է, 3), սերմանել կամ հնձել (1Գ, 21), փայտ քաղել (Թիւր, ԺԵ, 32-36), բռն վերցնել իւր վրայ կամ ներս բերել (Երեմ. ԺԷ, 21), հնձան հարկանել, որայ կրել, զբաստին վրայ բռն դնել, վաճառել կամ գնել որ և է ուտելիք կամ բան (Նեեմ. ԺԳ, ԺԳ, 15-16), խնկել մեռեալները (Ղուկ. ԻԳ, 56), և այլն:

Այդ արգիլուած գործերուն ղէմ կային նաեւ հրամայուածներ. ինչպէս գրէր ու նուէրներ մատուցանել Աստուծոյ (Թիւր, ԻԼ, 9-10. Եզեկ. ԽԶ, 4-5), և «սուրբ ժողով» կատարել (Ղեւտ. ԻԳ, 3 ըստ եբր. Բ. Մակար. Զ, 11), անոր մէջ կարգաւոր մարգարէները (Գործք Առ. ԺԳ, 27. ԺԵ, 21. Ղուկ. Գ, 17), և հուսկ օրհնութիւն մ'աւ հրգելով (Մատթ. ԻԶ, 30): Ուրիշ ծիսակատարութիւն չունի շարաթը:

Հրէական ժողովուրդն առաքելական դաւուն մասամբ ցրուած օտար երկիրներ, դեռ աւելի պարզած էր զայն, զանց ընկելով զոհերն ու նուէրները, որոնք Երուսաղեմի տաճարին մէջ միայն կրնային մատուցուել ըստ օրինաց, և շատանալով ժողովներ գումարել և անոնց մէջ կարգաւ «օրէնքն ու մարգարէները» (Գործք Առ. ԺԳ, 14-15):

7. Երբ կը ճննենք Յիսուսի կեանքն իւր քարոզութեան հոսանայ շրջանին, կը տեսնենք՝ որ Սինայի պատգամատուն մարդացած՝ այլ եւս չի ընծայեր շարաթուն հրէական մեծարանքը: Իբրև է՝ թէ նոյն օրը կը մտնէ ժողովներու մէջ. բայց իւր դերը կը լինի հոն քարոզել, իւր ստաւքելութիւնը կատարել, ոչ թէ ստակապէս մասնակցիլ անոնց (Մարկ. Ա, 21. Զ, 2. Ղուկ. Գ, 16, 31. ԺԳ, 10): Չհաշուելով Հրէից բողոքներն առ հասարակ իւր շարաթուրեաց բժշկութեանց ղէմ, որոց յառաջ բերած շարժումներով և աղմկով շարաթուն անդրբութիւնը կը խանգարէր, կը կատարէ կամ կատարել կու տայ այնպիսի գործեր ալ՝ որոնք ուղղակի կը հակադրուէին նոյն օրուան տառական պահպանութեան: Ահա օրինակներ:

Շարաթ օր մը կ'անցնէին արտօքէն, և աշակերտներն անօթեցած, սկսան հասկեր փրցնել, շփել իրենց ակերտուն մէջ և ուտել, ինչ որ չէր համաձայնի վերոյիշեալ խիստ սահմանին, որ կ'արգելուր կերակրոյ պատրաստութիւնը. և փարիսեցիք դիտողութիւն ըրին Յիսուսի, որ չժխաց անոր շարաթուն հակառակ լինելը. այլ յիշեցուց Դաւթի մէջ օրինականացութիւնը, և ըսաւ՝ թէ « Որդին մարդոյ շարաթին առ տէրն է» (Ղուկ. Զ, 1-5). այսինքն թէ կարողութիւն ունէր լուծելու զայն, և այդ պատճառաւ ալ կը լուծէր:

Նմանապէս հին անդամալոյծ մը կը բժշկէ շարաթ օր, և կ'ըսէ անոր. «Մահեմք ա՛ն ու զնա», և նա ելաւ, «մահեմքն առաւ ու կը շրջէր». իսկ մեք տեսանք՝ որ օրէնքը չէր ներք որ և է բռն վերցնել. և Հրեայք ըսին բժշկելոյն՝ թէ « շարաթ

է, և ներելի չէ թեզ վերցնել մահչեղ» : Աւետարանիչն ալ կը հաստատէ հող՝ թէ Յիսուս այդպիսի գործերով « կը լուծէր շարաթնեբը » . իսկ Տէրը չէր ժխտեր լուծելը, այլ կ'արդարացնէր, ըսելով՝ թէ « իմ Հայրս մինչև հիմայ կը գործէ, և ես ալ կը գործեմ » (Թ՛. Ե, 8-10, 17, 18) . Ուրեմն հոս ալ յայտնի է Փրկչին շարաթը լուծելու կամ վերածելու կամքը : Եւ այսպէս հրէական շարաթը սկսած էր խախտի նոյն ինքն Յիսուսի գործով ու վարդապետութեամբ :

Հ. Վ. ՀՅՈՒՆԻ

(Շարունակելի)

### ՔՆՆԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(Լ. Մարիէսի աշխատութեան առթիւ)

#### I.

Հին մատենագիրների շարքում Եզնիկ կողրացին այն բացառիկ գէմբերիցն է, որ պահել է գոնէ ցայժմ իր ւաւնդական հուշակը ամուր և ամբասիրտ Այն ինչ ներկայումս անվստահութիւնն ու կասկածները մթազնել են մեր գրի սկզբնական շրջանի հորիզոնները և թանձր ստուեր ձգել շատ անունների վերայ, Եզնիկը մնացել է անխոցելի և ամեն տարակուսանքից վեր : Չէ թէ միայն ոճի և բովանդակութեան կողմից, այլ և՛ հաւաստիութեան տեսակետից կողրացու փոքրիկ երկը հարուստ է հայ զորականութեան պարծանք :

Եզնիկին նուիրուած նոր ուսումնասիրութիւնը, որ պատկանում է մի լատին կրօնաւորի, չի սպառնում բնաւ որ և է կերպ նեմացնելու նորա դարաւոր փառքը : Ընդհակառակը, հայ բանասէրների կողմից, գլխաւորապէս Նոբայրի և Աճառեանի, յայտնուած ըանի մի դիտողութիւններ, որոնք նկատում էին բժեք գանեկու Եզնիկի գործի մէջ, Լ. Մարիէսի խոհուն մտքի առաջ ընկրկում են և չքանում :

Հէնց սկզբից Եզնիկի նոր ցննադատը յայտնում է, որ աւանդական տեսակէտը

ստոյգ և ընդունելի է համաձայն Ս. Վեբերի լուսարանութեան, և մատենագիր Եզնիկ կողրացին (սխալմամբ կողրը Տայրի մէջ է դնում) այն անձն է, որ ներկայ էր Արտաշատի ժողովին 449 թւականին և որ իր երկը գրել է 441, աւելի ճիշդ 445-448 թ. մէջ, ինչպէս հաշուում է նոյն վեբերը . այստեղից հետևումէ այն յայտարարութիւնը, որ անուան է Մ., որ « Եզնիկի հարց չկայ, ինչպէս հայ խորհնացու և կամ Աթաթանգեղոսի և ուրիշ նման հարցեր » :

Դժբախտաբար, վաղամամ ենք համարում այսօրինակ համարձակութիւններ և ցաւում, որ Մարիէս, հակառակ իր ցննական և զննական ընտրի ձիրքերին, հաւատ է ընծայել վեբերի հաշիւներին, որ համոզիչ հիմքեր ունենալուց հետո ևն :

Արդարեւ, վեբերի ելակէտը Եզնիկի մի նկատողութիւնն է պարսից կրօնի մասին, որ « ընդ գրով չեն կրօնքն », այսինքն գրի չեն աճեալ, ուստի երբեմն այս են աւսում, երբեմն այն մարդկանց խաբելու և մոլորեցնելու համար (Բ. 9) : Այս խօսքերը Եզնիկը չէր կարող ասել, ըստ վեբերի, պարսից հազարապետ Միհրնեսուհի դաւանական նամակից յետոյ, որ ուզուած էր հայերին Յազկերտ թագաւորի հրամանով : Պարսից թուղթը և նրա պատասխանը հայոց կողմից, գրուած Արտաշատի ժողովում, նմանութիւն ունին Եզնիկի գործին, որը բացատրելու նրա անմիջական մասնակցութեամբ, և ուրեմն, եզրակացնում է վեբերը, նորա երկը 450ից յառաջ պիտի գրուած լինի :

Նախ յայտնի չէ, Եզնիկի նկատողութիւնն իրեն է պատկանում, թէ քաղած է գրաւոր աղբիւրից : Ինչպէս կը տեսնենք ստորև, պարսից կրօնի վերաբերեալ հիմնական յօդուածը թարգմանածոյ է : Եւ որ յիշեալ նկատողութիւնը վերցրած է գրաւոր աղբիւրից, զորա կտրական սպացոյցն այն է, որ նոյն միւղքը գտնում ենք նաեւ Բարսեղ կեսարացու մօտ . խօսելով τὸν μαγουσαίων ἔθνος ἢ մասին, նա նկատում է . οὐτε γὰρ βιβλία ἔστι παρ' αὐτοῖς οὐτε